Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 17-ի N 321 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՍՆԱՎՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու անհրաժեշտ պայմանների և պահանջների հետ կապված հարաբերությունները:

2. Թույտվությունները տրամադրվում են համայնքի ղեկավարի կողմից այն իրա-վաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին՝

1) որոնք ներկայացրել են թույտվություն ստանալու դիմում (ձևը՝ կցվում է).

2) որոնց մասնավոր գերեզմանատան կազմակերպելու համար նախատեսվող, սեփականության կամ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի (այսուհետ՝ հողամաս) մակերեսը կազմում է նվազագույնը երեք հեկտար, ընդ որում՝ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասում մասնավոր գերեզմանատան շահագործումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ կառուցապատման պայմանագրով հստակ սահմանված է, որ հողամասի սեփականատերը հողամասը կառուցապատման է տրամադրել մասնավոր գերեզմանատուն կազմակերպելու նպատակով.

3) որոնց հողամասը հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների համաձայն՝ գտնվում է կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի վրա.

4) որոնք գերեզմանատան կազմակերպման համար օրենքով սահմանված կարգով ստացել են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն.

5) որոնք ներկայացրել են թույլտվության համար օրենքով սահմանված կարգով և չափով նախատեսված տարեկան տեղական տուրքի վճարման անդորրագիր.

6) որոնք պահպանել են «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանները:

3. Համայնքի ղեկավարը հողամասի սեփականատիրոջ կամ կառուցապատողի դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է թույլտվություն (ձևը՝ կցվում է):

4. Թույլտվության տրամադրումը մերժվում է, եթե դիմողի կողմից չեն պահպանվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.1-ին հոդվածով և սույն կարգով նախատեսված մասնավոր գերեզմանատների կազմակերպման և գործունեության համար անհրաժեշտ պահանջները և պայմանները: Թույլտվության տրամադրման կամ մերժման մասին դիմողին 3-օրյա ժամկետում տեղեկացվում է ծանուցումն առձեռն հանձնելու, փոստով կամ էլեկտրոնային եղանակով առաքելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության _____ մարզի

համայնքի ղեկավար _____ -ին

(անունը, ազգանունը)

Դիմող _____

(իրավաբանական անձի անվանումը,

_____

անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ տալ մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար թույլտվություն

_____

(հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, սեփականություն, կառուցապատման իրավունք)

հողամասի վրա:

Հայտնում եմ՝

1. Վճարել եմ թույլտվության համար օրենքով սահմանված կարգով և չափով նախատեսված տարեկան տեղական տուրքը՝ _____

անդորրագիր N

2. Պարտավորվում եմ պահպանվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և լիազոր մարմնի սահմանած կարգով նախատեսված մասնավոր գերեզմանատների կազմակերպման և գործունեության համար անհրաժեշտ պահանջները և պայմանները)

3. Կից ներկայացնում եմ.

1) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման (սեփականության կամ կառուցապատման) վկայականի պատճենը.

2) անդորրագրի պատճենը.

3) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացության պատճենը.

4) «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 19.1 -ին հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «ա», «բ», «գ» և «է» կետերի պահանջների կատարումն հավաստող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքների պատճենները.

5) ավտոդիատարի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

6) գործող դիակիզարանի օգտագործման կամ դրա ծառայություններից օգտվելու պայմանագրի պատճենը (սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ներկայացվում է, եթե մասնավոր գերեզմանատան տարածքում բացակայում է դիակիզարան):

Դիմող _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

___ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԻ ԱՆՈՒՆԸ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N

ՄԱՍՆԱՎՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Տրված՝___ _____ *20 թ.*

Մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեություն իրականացնելու համար

_____
(թույլատրված գործունեության անվանումը)

_____
(հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(հարկ վճարողի հաշվառման համարը)

_____
(գործունեության իրականացման վայրը/վայրերը)

Թույլտվության գործողության ժամկետը՝

___ _____20 -ից մինչև ___ _____ 20 -ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

16_0321